ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն 02/2021

ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 5 նոյեմբերի 2021թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի (նիստը նախագահող), Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2021 թվականի նոյեմբերի 5-ին, ուսումնասիրելով ՀՀ մարդու իրավուքների պաշտպան Արման Թաթոյանի դիմումը, **պարզեց**.

Դիմումի բովանդակությունը և պահանջը

1. 2021 թվականի նոյեմբերի 1-ին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի միջոցով Հանձնաժողովում ստացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի դիմումը:

2. Դիմումում նշվում է, որ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը «ՌՈՒՍԱՐՄԻՆՖՈ» լրատվական կայքին տված հարցազրույցի (այսուհետ՝ Հարցազրույց) ընթացքում, որն Անվտանգության խորհրդի Յութուբյան պաշտոնական ալիքում հրապարակվել է 2021 թվականի հոկտեմբերի 21-ին, անդրադարձել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը՝ անելով հայտարարություններ, որոնք չեն բխում Անվտանգության խորհրդի քարտուղարի՝ որպես հանրային ծառայողի

վարքագծի սկզբունքներից: Արմեն Գրիգորյանի կողմից արվել են այնպիսի հայտարարություններ, ինչպիսիք են՝ «հիմնական կառույցների մասով Հայաստանի որոշ քաղաքական շրջանակներ են հայտարարություն արել: Ավելի կոնկրետ՝ Մարդու իրավունքների պաշտպանը քաղաքական հայտարարություն է արել, որին Պաշտպանության նախարարությունը հստակ պատասխան է տվել, որ այդպես չէ: Կարծում եմ՝ կրկին անգամ ընդդիմադիր դաշտում հայտ ներկայացրած Մարդու իրավունքների պաշտպանը փորձել է քաղաքական դիվիդենտներ շահել՝ քաղաքական տեքստեր արտահայտելով», «եթե նկատել եք, հեղափոխությունից հետո բազմաթիվ օղակներ են եղել, որ հանդես են եկել որպես ընդդիմադիրներ՝ չնայած նրանք պետք է անաչառ լինեն, Սահմանադրական դատարանից սկսած բազմաթիվ կառույցներով վերջացրած», «կարծում եմ՝ Ձեր նշած անձի համար էլ մնացել է մի քանի ամիս ավելի ակնհայտ քաղաքական գործունեությամբ զբաղվելու համար», «իր ժամկետն ավարտվում է և «Իմ քայլը» խմբակցությունը, կարծում եմ, նոր թեկնածուով հանդես կգա», «Դուք տեսե՞լ եք որևէ անաչառ հայտարարություն, ավելի շուտ քաղաքական հայտարարություններ են եղել, գոնե հետհեղափոխական շրջանում»:

3. Դիմումատուն նշել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) իմաստով Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հանրային պաշտոն զբաղեցնող անձ է, հետևաբար, Օրենքի դրույթները տարածվում են Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոն զբաղեցնող անձի վրա: Դիմումատուն վկայակոչել է Օրենքի 22-րդ հոդվածի իրավակարգավորումն առ այն, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել նույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները: Ըստ այդմ՝ վկայակոչել է Օրենքի 25-27-րդ հոդվածներում բացահայտված վարքագծի սկզբունքների էությունը: Մասնավորապես, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսևորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսևորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս, իրենց լիազորություններն իրականացնելիս գործում են ազնիվ և բարեխիղճ, դրսևորում են անկողմնակալություն՝ բացառելով որևէ խտրականություն:

4. Դիմումատուն վկայակոչել է Օրենքի 28-րդ հոդվածի իրավակարգավորումը Միաժամանակ, վկայակոչելով նաև ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/1836/05/20 վարչական գործով կայացված վճիռը, նշել է նաև, որ վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների ընդունված չլինելու հանգամանքը չի կարող գնահատվել որպես վարույթ հարուցելը բացառող հանգամանք և հանդիսանալ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի կիրառման հիմք:

5. Դիմումատուն անդրադառնալով, Հարցազրույցի ընթացքում Արմեն Գրիգորյանի խոսքում բերված որակումներին, գտել է, որ վարքագծի կանոնները պետք է բխեն վարքագծի սկզբունքներից, որոնք արդեն իսկ հստակ սահմանված են Օրենքով: Այս սկզբունքներն ինքնին տալիս են հնարավորություն գնահատական տալու Անվտանգության խորհրդի քարտուղարի գործողություններին վարքագծի սկզբունքների բովանդակային բացահայտման պայմաններում՝ հիմք ընդունելով դիմումում ներկայացված փաստական հանգամանքները: Ընդգծել է նաև, այդ գնահատականը բացարձակ անհրաժեշտություն է և ունի բարձր հրատապություն՝ ապահովելու համար ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի բնականոն և խոչընդոտներից զերծ գործունեությունը:

6. Հղում կատարելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, նույն հոդվածի 4-րդ մասին՝ դիմումատուն խնդրել է Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի կողմից հանրային ծառայողի վարքագծի սկզբունքների և այդ սկզբունքներից բխող կանոնների խախտման առիթով հարուցել վարույթ և որոշել վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավասու մարմնին առաջարկություն ներկայացնելու հարցը:

Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վարույթ կարող է հարուցվել՝

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա.

2) լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա.

3) Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու դեպքում: (…)

Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից **վարքագծի կանոնների առերևույթ խախտումների** կամ իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի **առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ:**

2. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 29-րդ հոդվածով սահմանված դիմումին ներկայացվող պահանջներն են՝

1) դիմողի անունը, ազգանունը, (…),

2) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների առերևույթ խախտում թույլ տված պետական պաշտոն զբաղեցնող անձի կամ համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալի կամ Երևան համայնքի վարչական շրջանի ղեկավարի կամ նրա տեղակալի պաշտոն զբաղեցնող անձի կամ **վարքագծի կանոնի առերևույթ խախտում թույլ տված** կամ իրավիճակային շահերի բախման վիճակում առերևույթ հայտնված պետական պաշտոն զբաղեցնող անձի (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի) կամ համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալի կամ Երևան համայնքի վարչական շրջանի ղեկավարի կամ նրա տեղակալի՝ պաշտոն

զբաղեցնող անձի անունը, ազգանունը, որին վերաբերում է դիմումը, նրա զբաղեցրած պաշտոնը, և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որտեղ անձը պաշտոն է զբաղեցնում..

3) դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկան),

(…):

3. «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **պետական պաշտոն զբաղեցնող անձանց** (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող **վարքագծի կանոնները** սահմանվում են **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով**:

4. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝

1) **դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.**

(…)»:

5. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածով սահմանված են **Հանձնաժողովի լիազորությունները**: Նշված հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը.

«**քննում և լուծում է** պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի),

համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց **վարքագծի կանոնների խախտումների** և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ»:

Ուսումնասիրելով դիմումը և դրանից բխող պահանջին վերաբերելի Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

«Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (…) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով: Ընդ որում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ պաշտոնատար անձանց վարքագծի առերևույթ խախտման վերաբերյալ Հանձնաժողովը կարող է վարույթ հարուցել բացառապես այն դեպքում, երբ առկա է վարքագծի կանոն, որը սահմանում է, թե պաշտոնատար անձի կոնկրետ որ արարքը կարող է որակվել որպես վարքագծի կանոնի խախտում: Ընդ որում, Հանձնաժողովի՝ վարքագծի կանոնի առերևույթ խախտման հիմքով վարույթ հարուցելու իրավասությունը սահմանափակված են այնպիսի վարքագծի կանոնների շրջանակով, որոնք սահմանված են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համապատասխան իրավական ակտով: Օրենսդրի նման մոտեցումը բխում է իրավական որոշակիության սկզբունքից, որով էլ անմիջականորեն կաշկանդված է Հանձնաժողովը:

Այն բոլոր դեպքերում, երբ նման վարքագծի կանոնները բացակայում են, պաշտոնատար անձը փաստացի զրկված է իր վարքագիծը կոնկրետ իրավական նորմի պահանջներին համապատասխանեցնելու և օրենքի պահանջներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական հետևանքների առաջացումը կանխատեսելու օբյեկտիվ հնարավորությունից:

Այսպես, դիմումով ներկայացված՝ Անվտանգության խորհրդի քարտուղարի կողմից տրված Հարցազրույցը Անվտանգության խորհրդի յութուբյան պաշտոնական ալիքում հասանելի է դարձել 2021 թվականի հոկտեմբերի 21-ին: Նշված ամսաթվի դրությամբ Հանձնաժողովի կողմից դեռևս ընդունված չի եղել պետական պաշտոն

զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը, հետևաբար՝ սահմանված չեն եղել նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները:

Նշվածով պայմանավորված՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պաշտոնատար անձի **վարքագծի կանոնների բացակայության պայմաններում** վարչական մարմինը զրկված է այն իրավական հիմքից, որը կարող էր կիրառել և հիմնավոր համարել **վարույթ հարուցելու հիմքերի**, **այն է՝ վարքագծի կանոնների առերևույթ խախտման առկայությունը**:

Նույն կերպ Հանձնաժողովն անդրադառնում է նաև դիմումատուի այն դիրքորոշումը, որի համաձայն վարքագծի սկզբունքները հստակ սահմանված են Օրենքով, և դրանք ինքնին տալիս են հնարավորություն գնահատական տալու Անվտանգության խորհրդի քարտուղարի գործողություններին վարքագծի սկզբունքների բովանդակային բացահայտման պայմաններում վերստին չի կարող վարույթի հարուցման հիմք հանդիսանալ վերստին այն հիմնավորմամբ, որ **Հանձնաժողովն օժտված է վարույթ հարուցելու լիազորությամբ բացառապես վարքագծի կանոնի առերևույթ խախտման դեպքում:**

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ ***Օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները, իրավամբ, պետք է կանխորոշեն վարքագծի կանոնների բովանդակությունը, սակայն դրանք նյութական առումով*** ամբողջովին չեն բովանդակում կարգավորման հասցեատերերի վարքագծի կոնկրետ կանոնը:

Հիմք ընդունելով դիմումատուի կողմից վկայակոչված թիվ ՎԴ/1836/05/20 վարչական գործով կայացված վճիռը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նշված վճռի պատճառաբանությանը: Այսպես, նշված գործով ՀՀ վարչական դատարանն արձանագրել է, որ վարույթի հարուցման փուլում վարչական մարմնի կողմից քննարկման առարկա է դառնում դիմումի առերևույթ ընդունելիության մասով բովանդակությանը ներկայացվող պահանջները, այսինքն՝ որքանով է դիմումով բարձրացված հարցն իր բնույթով վարույթ հարուցելու հիմք հանդիսանում: ՀՀ վարչական դատարանը, նշված տրամաբանության ներքո գնահատելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, գտել է, որ վարույթ հարուցելու համար անհրաժեշտ և բավարար հիմք է վարույթ

հարուցելու մասին դիմումի առկայությունը՝ միաժամանակ արձանագրելով հետևյալը (մեջբերում). «Ընդ որում, եթե դիմումի ձևին ներկայացվող պահանջները չպահպանելը դիմումը վերադարձնելու հիմք է՝ այն շտկելու հնարավորության ընձեռնմամբ («Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդված, 30-րդ հոդվածի 2-րդ մաս), ապա **դիմումի բովանդակությանը ներկայացվող պահանջները վարույթ հարուցելու հարցը քննության առնելու շրջանակներում հանգում են վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացող դեպքի առերևույթ առկայության հաստատմանը, այսինքն՝ դիմումի ուսումնասիրությամբ պետք է պարզվի՝ արդյոք առկա է պաշտոնատար անձի կողմից դրսևորված վարքագիծ, որը ենթակա է գնահատման Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից**»:

Նշենք, որ Հանձնաժողովի համար ընդունելի է ՀՀ վարչական դատարանի պատճառաբանությունն առ այն, որ դիմումի բովանդակությանը ներկայացվող պահանջները հաշվի առնելով՝ վարչական մարմինը պարտավոր է վարույթ հարուցելու հարցը քննության առնել և վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացող **դեպքի առերևույթ առկայության պայմաններում** հարուցել այն**:** Այնուամենայնիվ, վարքագծի կոնկրետ կանոնների բացակայության պայմաններում առկա չէ այն նյութական նորմը, որով հնարավոր կլիներ գնահատելու պաշտոնատար անձի վարքագծում առկա է վարքագծի կանոնի առերևույթ խախտում, թե ոչ:

Հանձնաժողովը, կարևորելով նմանատիպ դեպքերում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի առնչությամբ իր լիազորություններն իրացնելու իրավական հնարավորություն ունենալը՝ գործուն քայլեր է ձեռնարկում վարքագծի կանոնագրքի ընդունման ուղղությամբ: Ներկայումս Հանձնաժողովը Եվրոպայի խորհրդի փորձագետների հետ համատեղ իրականացնում է վարքագծի կանոնների մշակման համար անհրաժեշտ աշխատանքներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 4-րդ մասով՝ Հանձնաժողովը անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (Հ. Հարությունյան (դեմ), Լ. Ալեքսանյան (կողմ), Ա. Փաշինյան (կողմ), Ն. Համբարձումյան (կողմ), Մ. Գալստյան (կողմ))՝

Ո Ր Ո Շ Ե Տ

1. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի կողմից 2021 թվականի նոյեմբերի 1-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել ՀՀ մարդու իրավուքների պաշտպան Արման Թաթոյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ